

## ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՐԱՑՈՒՅՑԸ

Պատմության հարցեր-2: Խմբ.՝ Ա. Ստեփանյան, Եր.,  
«Զանգակ-97» հրատարակչություն, 2013, 344 էջ\*:

**ԵՊՀ Համաշխարհային պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալբերտ Ստեփանյանի խմբագրությամբ լույս է տեսել «Պատմության հարցեր-2» տարեգիրքը:**

Ժողովածուն ամփոփում է ԵՊՀ Համաշխարհային պատմության ամբիոնի և նրան մերձ կանգնած մի խումբ արհեստավարժների (պրոֆեսորներ) հետազոտությունների: Վերլուծությունների և նպատակի բնույթով տարեգիրքը կարևոր խոսք է արդի հայ պատմագիտության բնագավառում՝ ոչ միայն իր հարուստ բովանդակության և հայ պատմագիտության լավագույն ավանդույթները շարունակելու տեսանկյունից, այլև «պատմության գրության նոր հնարավորության» առումով:

Ստորելով այդ ամենի շուրջ՝ անխուսափելի են հետևյալ հարցադրումները. կարելի է արդյոք տարեգրքում ընդգրկված հրապարակումների իմաստային ու ժանրային բազմազանությունը և դրանց համաբերման ճիգը համարել պատմության նոր հարացույցի ցուցիչ, եթե այո՝ որքանով է իրական խոսել պատմության նոր հարացույցի հայկական տարբերակի մասին:

Արդեն 2002 թ. պրոֆ. Ա. Ստեփանյանի խմբագրությամբ լույս տեսած «Ինքնության հարցեր»<sup>1</sup> տարեգրքում փորձ էր արվել «լուսաբանել համակեցական ինքնության (և առաջին հերթին՝ հայ ինքնության) հիմնահարցերը՝ ամբողջի, հատվածի, ինքնապատկերի, համամարդկային և տիեզերական Հանուրի դիտանկյուններից», հարդյունս որի «անհատներն ու ազգերը հասնում են մտահոգևոր կայացման նորանոր հանգրվանների»<sup>2</sup>:

Ասվածի տրամաբանական շարունակությունն ակնհայտ է «Պատմություն և կրթություն» հանդեսի երկու պրակներում (1-2/2005 և 3-4/2007): Այդ հանդեսի խնդիրն էր հայ պատմագիտության ներքին կառույցների և արժեքային համակարգերի վերանայմամբ «խորացնել ազգի պատմական հիշողությունն ու գիտակցությունը»<sup>3</sup>: Եվ այս ամենն իրագործելու համար անհրաժեշտ էր համարվում «պատմագետների արհեստախմբի (կորպո-

\*Ընդունվել է տպագրության 4.03.2014:

1 «Ինքնության հարցեր, տարեգիրք», խմբ. Ա. Ստեփանյան, Եր., «Զանգակ-97», 2002, 296 էջ:

2 Երկու խոսք, «Ինքնության հարցեր, տարեգիրք», խմբ. Ա. Ստեփանյան, Եր., «Զանգակ-97», 2002, էջ 9:

3 Ա. Ստեփանյան, Ընթերցողին, «Պատմություն և կրթություն», Եր., «Զանգակ-97», 2005, էջ 7:

2 (ՃԲ) փարի, թիվ 1 (45) հունվար-մարտ, 2014  
ՎԷՄ համահայկական հանդես

րացիա) հետևողական և տևական աշխատանքը», նպատակավ «ի մի բերելու պատմագիտության առկա բոլոր ենթատեքստերն ու ենթալեզուները՝ սկսած ակադեմիական էսսեից մինչև ընկերաբանական (սոցիոլոգիական) հարցախոյզ, պատմական դիմանկարից մինչև մանկավարժական դիտարկում», ստեղծելու համար «պատմական գիտության մի այնպիսի միջավայր, որտեղ հաշվի կառնվեն ընթերցողական տարասեռ հետաքրքրություններն ու ճաշակները»<sup>4</sup>:

Այս համապատկերում՝ «Պատմության հարցեր-2» տարեգիրքը կարելի է դիտարկել իբրև մեզանում **պատմագիտության ինքնագիտակցման որոշակի հանգրվան**: Ըստ այդմ՝ ժողովածուն **նպատակ ունի ձևավորելու հայ նոր պատմագետի կերպարը**: Պատմական խաղընթացի (ֆաբուլա) կայացման կարևորագույն նախապայմաններից մեկը պատմագետի անձն է: Նա ներգրավված է իր դարաշրջանի ընկերային, գիտական և մշակութային իրողությունների համապատկերում՝ պատրաստ դրանց դիտանկյունից երկխոսային հարաբերություն հաստատելու անցյալի հետ: Այդ երկխոսային պատմությունը միտված է պատասխան տալու ոչ միայն «ինչ է եղել» հարցին, այլ նաև՝ «ինչ կարող էր լինել ըստ պատահականության և անհրաժեշտության»: Դրանով՝ ընդլայնվում են պատմության ավանդական սահմանները<sup>5</sup>:

Մեծ մոտավորությամբ՝ այսպիսին է մեզանում «պատմություն» գիտակարգի վերափոխման հեռանկարը: Համալիր հարցադրումներով էլ այն ամբողջացնում է «Ինքնության հարցեր» տարեգրքի և «Պատմություն և կրթություն» հանդեսների խնդրարկումներն ու հայ պատմագիտության մեջ ուրվագծում պատմագիտական նոր հարացույցի հնարավորությունը:

Այսպիսով՝ «Ինքնության հարցեր» տարեգրքի, «Պատմություն և կրթություն» հանդեսի չորս համարների և «Պատմության հարցեր-1», «Պատմության հարցեր-2» տարեգրքերի համադրմամբ ակնհայտ է դառնում, որ մեզանում փորձ է արվում պատմությունը դիտարկել ասույթի բոլոր կարևոր միջավայրերում (և՛ ակադեմիական, և՛ բուհական, և՛ դպրոցական), միտված՝ պարամելու պատմության տարաբնույթ ընկալումները: Ըստ այդմ՝ կարող ենք առանձնացնել նորարարականության դրսևորումն առնվազն վեց տարբեր չափույթներում: Այն է՝

ա. Պատմության դիտարկումը տրամասույթի տարասեռ չափույթներում (ակադեմիական, բուհական, դպրոցական),

բ. Տեսական պատմագիտական խնդիրներ,

գ. Կոլեկտիվ մենագրության ժանրը (հոդվածների իմաստային և ժանրային ամբողջականությունը),

դ. Մենագրական հոդվածի ժանրը,

ե. Լեզվական ատաղձը,

զ. Քաղաքակրթական չափույթը:

Պատմության դիտարկումը տրամասույթի տարասեռ չափույթներում ընկալվում է երկու ուղղությամբ՝ մի կողմից, միջգիտակարգային (միջդիս-

4 Անդ:

5 Ա. Ստեփանյան, Երկու խոսք, «Պատմության հարցեր-2», խմբ. Ա. Ստեփանյան, Եր., «Զանգակ-97», 2013, էջ 7:



հարկավ, արվել են, սակայն սխեմատիկ. մեկ գրքի մեջ ներառվել են մի քանի հետազոտողների իրար հետ բնավ չերկխոսող աշխատանքներ: Սակայն **համընդգրկուն պատմություն** ունենալու համար կենսական անհրաժեշտություն է հարակից գիտությունների հետ համագործակցությունը, որի բացակայության դեպքում ներկա պատմագիտական ճգնաժամը անհաղթահարելի իրողություն է:

Կոլեկտիվ մենագրություն – ահա հայ պատմագետներին առաջադրված նոր լուծումը, երբ գանազան կրթանքների արդյունքների համադրմանը միայն կարելի է տվյալ ժամանակի տվյալ հիմնախնդիրը որոշարկել պատմական հիմնախնդիրների ողջ շերտերով ու ամբողջականությամբ: Այսու՝ հնարավոր է և պատմագիտության շրջափոխումը «խնդարկման գիտության»:

Նույն սկզբունքներով կառուցված է և մենագրական հոդվածի ժանրը՝ արդեն ավելի սեղմ տարածքում: Այն է՝ հոդվածը կառուցակազմված է հետազոտական հիմնախնդրի և դրանից բխող ենթախնդիրների շուրջ: Ընդ որում՝ հոդվածը, իր մակարդակի տարասեռ ասույթների միջև տարասեռ կապեր ստեղծելով, կազմակերպում է տեքստը, որն օժտված է մենագրության իրողության բոլոր նշաններով: Այս դեպքում հոդվածը դադարում է պարզապես մուտքի, ընթացքի և ավարտի (ամփոփման) պասիվ օղակ լինելուց: Այլ կերպ ասած՝ հոդվածի սեղմ շրջանակներում հնարավոր է դառնում լուծել մի խնդիր (կամ խնդիրներ), որը սովորաբար լուծելի է մենագրության համեմատաբար ընդգրկուն ծավալում: Հավելենք, որ մենագրային հոդվածը կազմակերպվում է պատումի (narrative) սկզբունքով ու տրամաբանությամբ՝ գիտաթեմայի բանաձևում, մուտք, հիմնախնդրի արծարծում, ավարտ-ամփոփում և գիտական ապարատ (սկզբնաղբյուրների և գիտական գրականության ճշգրիտ հղում): Այս առումով ուշագրավ է նաև տարեգրքի կառույցը. I. Տեսություն, II. Պատմության հոլովույթը, III. Պատմության սահմանները (Պատմական աշխարհագրություն, Պատմություն և գաղափարաբանություն, Պատմություն և նշանագիտություն, Պատմություն և գեղարվեստական տեքստ, Պատմություն և ժուռնալիստիկա), IV. Ժառանգություն, V. Պատմական ակնարկ, VI. Բուհական դասախոսություն: Բոլոր այս բաժինները, լինելով ինքնուրույն, միևնույն ժամանակ խորքային առումով կազմում են մեկ ամբողջական-երկխոսային տեքստ (տվյալ դեպքում՝ տարեգիրք):

Պատմագիտության ներփակության և համաաշխարհային պատմագիտական մտքի եզրաբանական բառագանձարանից անհաղորդ մնալու պատճառով հայ պատմագիտական լեզվաբառապաշարում հրնթացս ժամանակի աղոտանում են հետազոտական եզրերի, հղացքների կամ հասկացությունների իմաստները: Իսկ հաճախ տեղի-անտեղի, անհաջող ու թյուր կազմակերպման արդյունքում կամ դուրս են գալիս կիրարկումից, կամ էլ պահեստավորվում հազվադեպ կիրարկումների շրջանակներում: Այսու՝ հայ պատմագիտության հիմնախնդիրներից է ոչ միայն պատմագիտական հասկացությունների, հղացքների վերախմաստավորումը, այլև նորերի ստեղծումը: Այս գիտակցմամբ տարեգրքի հիմնական ուղղություններից է արդի պատմագիտական և այլ նշանակության եզրե-

րի թարգմանում-կիրարկումը: Մի բան, որն, անշուշտ, չպիագանց դժվարին աշխատանք է: Երբեմն թարգմանությունն անհնարին է. ոչ բոլոր դեպքերում է, որ օտար եզրն ու դրա հայերեն տարբերակը պարառում են համարժեք իմաստային դաշտեր: Ավելի հաճախ՝ դրանք չեն համընկնում, և մտքի ճիգ է պահանջվում՝ հին և իմաստակորոյս բառերի իմաստները արդիականության համատեքստում ձշտելու և վերականգնելու համար: Առանձին բառարանի և գրքի գործ է՝ ուսումնասիրելու և ներկայացնելու թե՛ բառարանային և թե՛ բացատրական ամբողջությունը, որպիսին առկա է և հանդեսի լեզվաոճական բառապաշարում (օրինակ՝ «առտնին պատմություն» (Histoire du quotidien / History of Everyday Life), «մտակեցվածքային պատմություն» (L'histoire des mentalités) և այլն):

Տարեգրքի հիմնադիրները, վերակերպելով հայ պատմագիտության թե՛ մեթոդաբանական և թե՛ հետազոտական ողջ կառույցը, հետազոտությունների շրջանակներում պատմության հիմնախնդիրը դիտարկել են արդեն ժամանակատարածքային և բովանդակային նոր չափումներում: Դրանով փորձ է արվում հաղթահարել ավանդական գծային-իրադարձութենական ժամանակը: Այսու՝ տարեգրքի շրջանակներում պարառելով հիմնախնդրի ժամանակային չափման պատմական գործընթացի տարբեր շերտեր, առաջին անգամ հայ իրականության մեջ քայլ է կատարվում առ պատմական ժամանակի և քաղաքակրթության փոխհարաբերության հիմնախնդիրը: Այսու՝ հայոց պատմության դիտարկումը համաշխարհային պատմության հետնախորքում, նպատակավ՝ ազգային լոկալ ժամանակը լծորդել համաշխարհային տոտալ ժամանակին: Պատմությունը դիտարկելով ժամանակի քաղաքակրթական կամ «երկար տևողության» (Բրոդելյան *longue durée*-ի) ծիրում, առաջնային են դառնում պատմական գործընթացների տարասեռության ու ռիթմային բազմազանության ճանաչումն ու հետազոտությունը, ինչին և հետամուտ են տարեգրքի հիմնադիրները:

Ավելին, քայլ է կատարվում քաղաքակրթական հոլիզմը (ամբողջընկալում) կառուցալուծելու և նրա բաղադրիչների միջև նոր (պատճառական, տիպաբանական, համակարական) հարաբերություններով պատումի նոր մետատեքստ ձևավորելու ուղղությամբ: Բայց այս մտտեցումը տարեգրքում դեռ սոսկ ուրվագծվում է՝ հետագա զարգացման հանձնառությամբ: Հուսանք, այն հետազոտական նոր հեռանկարներ կբացի:

Այսքանն իսկ բավական է եզրակացնելու համար, որ «Պատմության հարցեր-2» տարեգիրքը հումանիտար գիտությունների տարաբնույթ ալգորիթմների համադրման հաջողված փորձ է: Եվ դա թույլ է տալիս այն դիտարկել իբրև պատմության նոր հարացույցի օրինականացման հայկական նախագիծ:

Սմբատ Խ. Հովհաննիսյան  
Պատմ. գիտ. թեկնածու

**A NEW PARADIGM OF ARMENIAN HISTORIOGRAPHY**

Problems of History-2, Ed.: A. Stepanyan, Yerevan, "Zangak-97", Publishing House, 2013, 344 p.

Smbat Kh. Hovhannisyan

**НОВАЯ ПАРАДИГМА АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ**

Проблемы истории – 2, Ред.: А. Степанян, Ереван, Изд.: "Зангак-97", 344 с.

Смбат Х. Ованнисян